

1739

ՎԱՐԱՍՏԵԼ

- Բ

1739

ԻՆՁՆ Է

ՍՏԻՊՈՒՄ ՄԵԶ

ԲԱՐԵՓՈԽԵԼՈՒ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԸ

1624
373

(Բաղասրախան Վերդի գրեռ-ի)



Հայկական
Գրական
Գրադարան
— Մարտի



1948

ԹԵՀՐԱՆ

ՏԳԱՐԱՆ „ԻՐԱՆԶԱԳ“



ԻՆՁՆ Է ՍՏԻՊՈՂԻՄ ՄԵԶ

ԲԱՐԵՓՈՒԵԼՈՒ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԸ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Բոլորիս արդէն յայտնի է, որ հայոց գրերի անմահանուն գիւտարարն ու յօրինողն է ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ վարդապետը: Մեր այբուբենը Ե-րդ դարում՝ 404 թւին. Մաշտոցը կազմեց 36 գրերից, (օ և ֆ գրերը մտան մեր այբուբենի մեջ ԺԲ-րդ դարում, խաչակրաց արշաւանքից յետոյ) որոնցից ամեն մէկը համապատասխանում է մեր լեզւին յասուկ մի հնչիւնի:

Ահա Մաշտոցի կատարած վեհ գործը: Մեր լեզւի իւրաքանչիւր հնչիւնի համար մի նշան կամ տառ որոշելով, նրանց տարազաւորման գործն իր վրայ չըվերցըրեց, այլ տառերին վայելուչ և զեղեցիկ ձևեր տալու համար դիմեց Հռոփանոս անունով մի յոյն գծագրողի՝ Սամուսատ քաղաքում և վերջինիս օգնութեամբ գեղագրեց հայերէնի տառերի նախնական ձևերը:

Այդ նախնական ձևերը տեսնելու հաճոյքից մենք զրկւած ենք, քանի որ մեզ հասած ամենահին զբրջագիրը, որ Մոսկւայի Լազարեան ձեմարանի բոլորածե երկաթագրով գրւած աւետարանն է ունի հայոց ՅԼԶ թւականը՝ = 326 + 551՝ ասել է 887 թւին է պատկանում (Թ-րդ դար):

Ուրեմն, Մեսրոպ Մաշտոցի կատարած մեծ գործը՝ Հնչաբանական [Phonétique] է. այդ գործը կատար-

եալ է՝ այնպէս որ մեր լեզուն օժտւած է այնպիսի հնչիւններ արտաբերող գրերով, որոնցից զուրկ են լատինատառ լեզուները. օրինակ՝ խ, ծ, ձ, դ, ճ, շ, չ, ջ:

Մեր լեզուն հնչարանական օտարական լեզու է: Հնչարանական տեսակէտից չէ՛, որ պիտի ուսումնասիրութեան առարկայ դարձնենք մեր լեզւի գրերը՝ որ վերաբերում է լեզւարանութեան, այլ գրաֆիկական [Graphique] և գեղագրական [Colligraphique] որ հնչիւնները պատկերացնող նշանները լինելով, թէև առնչում են նաև լեզւարանութեան, սակայն նրանց արտաքին տարազների գրաֆիկական գծագրութիւնն ու կառոյցներն անմիջականօրէն կարելի է կապել նախադասութեան՝ բնորոշելով «Տառերի նախադասութեան» բաներով:

Այս աշխատանքն էր, որ Մաեսոյը չ'կարողանալով կատարել դիմեց Հոռփանոս յոյնին՝ որ մի գծագրիչ-գեղագիր էր: Ահա այս գործն է, որ բերի է:

Գրաֆիկական վերաբերում է տառերի, կամ ամէն մի գրի ձևին առանձին-առանձին, իսկ նրանց հաւաքական տեսքն ու ոճը՝ նախադասութեան, ներկայ պարագային հայկական ոճին, կամ հակական նախադասութեան:

«Ներկարգիր» ու «բոլորագիր» կոչող տեսակները Մեսրոպեան գրերի հնագոյններն են:

ԺԴ և ԺԵ դարում, այս տառերն այլևս չեն բաւարարում մեր նախահայրերին. արագ գրելու կարիքն առիթ է տալիս նրանց ձևակերպելու նոր տեսակ գրեր և այդպիսով առաջանում է այսօրւայ հասարակ և պարզ՝ գրչագիր կամ նոսրգիր կոչւած տեսակը:

ԺԹ դարում ստեղծւում է գրութեան մի նոր ձև

ևս՝ շղագիրք: Այսպիսով, նստգիրք գալիս եր կրնասելու ժամանակի աւելորդ վասնումը՝ արագացնելով գրիչներէ կամ գրչագրողների աշխատանքը:

Շղագրի մէջ տառերը կլորածել էին դառնում:

Այսպէս ուրեմն, չի կարելի անտեսել այն պարագան որ ժԴ—ԺԵ դարից դեռ, սկսել են նկատի առնել մեր գրերի գրութեան արագացումը եւ բնականաբար՝ ժամանակի խնայողութիւնը:

Տպագրութեան՝ կամ գրքի արւեստն աստիճանաբար աւելի զարգանալով՝ զգալի դարձաւ արդի նաւակի պրսեւորման անհնարինութիւնը՝ ինչ գրերով: Մեք գրելի քերութիւններ վաղուց գրաւել էին տպագրական արւեստի նախանձախնդիր անձնաւորութիւնների ուշադրութիւնը, և սկսած հայկական տպագրութեան ծնունդից, որ տեղի ունեցաւ 1512 թւին Իսպիայի Վենեսիկ քաղաքում, մինչև մեր օրերը ամէն մէկն աշխատում էր որեւէ կերպով սրբագրել մեր տառերի թերութիւնները:

Հայ տառերի մեջ կան 8 տառեր, որոնք միւս տառերի մէկ եւ կես լայնքն ունեն եւ նոյնչափ տեղ են զբաւում:

ՄՏԵՓՈՆՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Լատինասառ լեզուների մանրագրերն ասամնային կառոյց չունեն՝ այլ կլորածել են, լայն գրեր չունեն՝ որով խնայողական են, երկար ու տեղ գրեր չունեն՝ որով լրացում են գեղագիտական պահանջները:

Մեր գլխագիրք գուրկ է գծագրական օրէնքներից,

խնայողական չէ, եւ ունի տնային տնայիններ եւս:

Մեր ձեռագրի բնութեամբ միջոցին յանախ են տեղի ունենում անասնաբուծականներ, նման գրեթէ գրական գրութեան մտկութեան պատճառով:

ՎԱՐԱՍՏԵՒ.

ՄԵՐ ԲՈՂՈՐԱԳԻՐՆ ՈՒՆԻ 5 ԹԵՐՈՒԹԻՆՆԵՐ

- ա) Շփոթելիութիւն
- բ) Դժարբնութեան շփոթելիութիւն
- գ) Շոյալիութիւն
- դ) Տգեղութիւն
- ե) Դժարութեան շփոթելիութիւն

ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ

Նրկաբազիր

Ա Ռ Գ Գ Ե Զ Է Ը Թ Ժ
Ի Լ Խ Ծ Կ Զ Զ Դ Զ Մ
Ե Ն Շ Ո Չ Պ Զ Ռ Ս Վ
Տ Բ Յ Ի Փ Գ Օ Ֆ

Բոլորազիր

ա բ գ դ ե զ է ը թ ժ
ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ
յ ն շ ո չ պ ջ ռ ս վ
տ բ ց լ փ ղ օ ֆ

Շղագիր

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ
ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ն	մ
յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ	ս	վ
տ	բ	ց	լ	փ	ֆ	օ	ֆ		

ա) Շփոթելիութիւն.— Բնականաբար նմանութիւններն են որ պիտի շփոթուի իւրեաների տեղիք տան. իսկ կան մեր գրերի մէջ այդպիսի տառեր. առաջ ենք բե-

թում մեր «փ» գիրը, որի տառակառոյցից կարող ենք հեշտութեամբ անջատել Յասը՝ գրեր՝ ւ, ս, ո, տ, ի, վ, բ, լ, չ, մ. նոյնպէս կարելի է անել միւս գրերից շատերի հետ:

Սա խոսքը տառակազմական մի բերութիւն է և այս պարագան ցոյց է տալիս մեր տառերի կազմական նախնականութիւնը [Primitive] և բնականաբար թուլութիւնը: Մեր գրերը լուցկու փայտիկների օգնութեամբ կազմած ձևերի նմանութիւն են թողնում աւելի շուտ, և այս հանգամանքն է բնականաբար առիթ տալիս մեր լեզւի գրերի շփոթելիութեան:

Լասին գրերի հետ նոյն բանը անել մեզ չի յաջողի, որովհետեւ նրանցից ամեն-մեկն ունի բնորոշ եւ իւրայատուկ տառանք:

բ) Դժարընթեռնելիութիւն.— Պարզ է, որ նմանութիւններ ունեցող գրերը նաև դժարընթեռնելի պիտի լինեն, այդ դեռ ոչինչ, նրանք նաև սխալընթեռնելի են: Դժարընթեռնելիութիւնն առաջանում է մեր գրերի միանման ասամնային և անկիւնաւոր տառակառոյցների պատճառով, որոնք սանրի ատամների նման յաջորդում են իրար և իրենց միապադաղ ձևերով տհաճելի լինելով մեր տեսողութեան համար, շուտ յոգնութիւն են պատճառում աչքին. (ա, տ, ո, ս, գ, դ, զ, զ...)

Հասկանալի է, որ նման գրերի տեսքերի պատկերացումը՝ նրանց ճանաչելու համար՝ դժարութիւններ պիտի յարուցի ընթերցման ժամանակ և այդպիսով դառնայ դժարընթեռնելի: Տպագրութեան ժամանակ ատամնային մասերը թանաք լցւելով, մանաւանդ տառերը մաշւած դէպքում, նրանց անճանաչելի են դարձնում:

Լաւորն գրեմն աւամնային կառոյց չունեն այլ կլորածն են:

4) Շոյալուքիւն. — Դիտեցէք այս տպագրուած էջը և գտէք թէ ո՞ր տառն է մեր տպագրական մանրագրերէրից ամենից առաջ գրաւում Ձեր ուշադրութիւնը:

«Թ» մանրագիրն է, որ ամէնից առաջ աչք է մտնում իր տիրական և խրոխտ տառակառոյցով, նոյնպէս և գլխագրերի մէջ. «Թ» գրի ձախակողմեան երկար սիւնը եթէ կտրենք, կմնայ ժ գիրը: Մեր տառերի մէջ կան 8 տառեր՝ ա, թ, խ, պ, ո, տ, փ, ֆ, որոնք շոյալուքի տառակառոյց ունեն գրաւում են միւս գրերի 1-ին 1 1/2 լայնք. այդ գրերը կազմում են 3 տառասիւներից:

Այս գրերի՝ սովորական գրերի լայնքի մէջ սեղմումը, մի էանի գրերի տառածեւերի բարեփոխման հետ, 30 ՏՈՒՆՈՒՄԻ կ'իրնասի նրանց գրաւած տեղը՝ որով եւ կ'կատարուի տպագրական ծախսերի՝ տպագրութիւն, ձուլանիւթ, թուղթ, թանաք, ժամանակ, փոխադրութիւն՝ կրնասում, ապահովելով ՆՈՅՆՔԱՆ ՇԱՀ:

Մեկ եւ կէս լայնք ունեցող շոյալուքի կառոյցով գրերը միեւնոյն ժամանակ խանգարում են միւս տառածեւերի տեւք պատկերացումը՝ միասնական առաջ աչքի ընկնելով, ինչ որ հոգեբանական է եւ միեւնոյն դեպքում ոչ անհրաժեշտ մի պայման:

Լաւորն գրերի մէջ անհաւասար լայնք ունեցող գրերի չենք յանդիպում (բացի տ-ից), որով եւ խնայողական են:

5) Տգեղութիւն. — Որոշ գծագրական օրէնքների չենքարկող գրերը չեն կարող գեղեցիկ լինել. Իսկ ունեն մեր գրերն այդ օրէնքները, — համոզուելու համար դիտենք

մեր գլխագրերն աւանձին-տաւանձին կամ նրանցով տպագրւած վերնագրեր: Ահա մեր Ծ գլխագիրը միւս գրերի մէջ իր տձև արտաքինով, Թ, Խ, Պ, Փ, Ֆ, գրերը, զիս մի կողմ թողած նոյն գրի իրարից բոլորովին տարբեր ձևերը, որոնց ստիպւած ենք՝ ղիցուկ «Շ» կարգալու սակայն իրար նման ձևեր չեն:

Մեր գլխագիրը զուրկ է զժագրական հիմնական օրէնքներից. այդ տառաձևերն աւելի նկարչական բնոյթ ունեն:

Լատին գլխագիրն ունի զժագրական որոշւած օրէնքներ:

Երկու ուրիշ պարագաներ՝ լայնութիւն և երկարութիւն (բացի գլխագրից) նպաստում են մեր գրերի տգեղութեան: Լայն գրերի մասին արդէն խօսել ենք: Որոնք են երկար գրերը: Դրանք մեր տպագրական մանրագրերի այն տառերն են, որոնք ամէնից երկարներն են և շօշափում են առաջին եւ չորրորդ հորիզոնական գծեր (օր. ի, խ, կ, ևլն):

Լատին մանրագրերի ամենտեղիւր գրերը ձեւաւորում են միայն երեք հորիզոնական գծերի լայնում՝ բնականաբար աւելի հաւաք տեսք ունենալով, օգնում են գեղագիտական նաւակին:

Ե) Դժուարութեան խորիւն. — Այս բոլորից կարող ենք եզրակացնել, որ Գլխագրի, դժուարութեան խորիւն, օրոյական և ոչ գեղեցիկ գրերը չեն կարող լինել դիւրաւ տուգանելի:

Մեր ասածները տպացուցելու համար համեմատութեան դնենք մեր այբուբենի բոլորագիրը լատին մանրագրի հետ:

Բոլորագիր

Լատին

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ
ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ
յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ս	վ	
տ	ր	ց	ւ	փ	ք	օ	ֆ		

a	b	c	d	e	f	g	h	i	j
k	l	m	n	o	p	q	r	s	t
u	v	(w)	x	y	z				

Լատին այբուբենի գրերը քառվ 25 (26) հաս են:

Որպէս հիմնական օրէնք տալագիր մանրագիրն ու ձեռագիրը գրւում կամ գծագրւում են 4 հորիզոնական գծերի լայնքերի միջև, որոնցից երկուսը՝ միջին և երկուսը՝ եզրերի: Այս հորիզոնական գծերի լայնքերը ձևացնում են գրերի բարձրութիւնը կամ երկարութիւնը:

Այսպիսով լատին գրերից 6 հատը երկու միջին հորիզոնական գծերից դեպի վեր են գնում՝ b, d, f, h, l, t, դեպի ցած են իջնում 5 գրեր՝ g, j, p, q, y, իսկ մնացած 15 գրերը հաւաստ կամ տեղի գրեր են՝ կազմւած երկու միջին հորիզոնական գծերի միջև:

Հայոց այբուբենի գրերը քառվ 38 (39) են: Դանձաւ են նրանցից հաւաստ գրեր, — ա, ո, ո, ս, տ, լ, օ՝ միայն եօթ գրեր 38 գրերի մէջ: Իսկ մնացած գրերը կազմւում են այս հաւաստ գրերի ձևերին վերջաւորութիւններ, թևեր, պոչեր կպցնելով և այսպիսով ունենում ենք դեպի վեր բարձրացող ե, է, ժ, ծ, հ, ձ, ճ, մ, ն, և՛ 10 գրեր դեպի ցած իջնող՝ բ, գ, դ, զ, ը, լ, զ, յ, շ, պ, ջ, ք, ց, ք, 15 գրեր:

Մեր գրերի մէջ բաւական անախորժ տեսք ունեն թ, ի, խ, կ, Վ, փ, ֆ՝ եօթ գրերն, որ ինչպէս տեսանք լատին գրերի մէջ գոյութիւն չունեն: Այս գրերը՝ որոնցից 6 կազմւած են երեք տառասիւններից և եօթն էլ շօ-

շափում են 4 հորիզոնական գծերի ամբողջ լայնքը, հասում են բաւերին տհաճելի բարձրութիւններով։ Ինչպէս տեսանք՝ լատին գրերի մէջ թէև կայ չորս հորիզոնական գծերի օրէնքը, սակայն, տըպագրական ոչ մի առ, չի ձեւակերպում այդ չորս հորիզոնական գծերի ամբողջ լայնքում՝ այլ միայն՝ երկուսում կամ երեւում։

Այժմ, հրատարակի վրայ ե այն հարցը, քե պե՞տ է բարեփոխել մեր գրերը, քե՞ ոչ. դրա պատասխանը դրական լինելով հանդերձ, միեւնոյն ժամանակ ԱՆՄԻՋԱ-ԿԱՆ անհրաժեշտութիւն ներկայացնող մի խնդիր է, բանի որ միայն խնայողական տեսակէտից՝ 30 ՏՈԿՈՍ՝ ՇԱՀ է ներկայացնում։

Հայաստանում, առաջին անգամ այս խնդրին անդրադարձաւ, հայագէտ ակադ. Ստեփաննոս Մալխասեանը, 1935 թ. «Մարտակոչ»-ի մէջ՝ խնայողական՝ և 1926-ին՝ աւելի գեղազիւական մօտեցումով։

Նոյն թւին, խնդիրը պաշտօնական բնոյթ է ըստանում, կազմւում է մի յանձնախումբ, այդ ուղղութեամբ աշխատելու համար։

Իսկ 1932 թւին Հայաստանի կառավարութիւնը, մի կոչով, հրաւեր է ուղարկում երկրի եւ սփիւռքի գրի մասնագէտներին, արեսագէտներին, որպէսզի ուսումնասիրեն խնդիրն ու առաջարկներ ներկայացնեն։

Դեռ ԺԹ-ը դարի կէսերին, Ջանիկ Արամեան անունով մի տպագրիչ, սրբագրեց մեր տպագրական տառերի մի քանի թերութիւնները։

Նա յօրինեց կլորամեւ, տեղմ, և իրարից արձապէս ճաքեւեղ, տպագրական տառեր։

Արամեանը՝ Փարիզում տպագրում էր «Մասեաց աղանի», հանդէսը: Գրերի բարեփոխման խնդիրը քննելով, մասամբ լուծեց, և իր յօրինած տառաձևերը գործածութեան մէջ դրեց. նրանք մուտք գործեցին մեր մամուլի պատմութեան մէջ և իրենց ձևերը պարտադրելով՝ որոնք կարգացում էին հեշտութեամբ՝ սրգեգրեցին մեր տպագրական արեսի կողմից՝ կոչւելով «Արամեան» շղագրեր:

Ջանիկ Արամեանի մօտեցումը՝ գրերի բարեփոխման խնդրում առաջնորդել և լաւիացման սկզբունքով:

Այդ շղագրերի մէջ կան կատարեալ լատինական հետեւեալ գրերը՝ յ, հ, յ, ո, ս, ռ, ց, ք, օ (10 տառեր), որոնք՝ այսպէս թէ այնպէս, արդէն գործածում են մեր տպարաններում, իսկ մեր պիտագրերի մէջ կան՝ Լ, Ռ, Ս, Տ, Օ, (5 տառեր):

Բնականաբար, գրերի արդիականացումն, որ որպէս հիմունք ունի պարզացումը, նրանց առաջնորդում է եթէ ոչ կատարեալ լատինացման, գոնէ նմանութեան, քանի որ լատիններէն գրերը լինելով ամէնակատարեալը՝ լրացնում են նաև տպագրական արւեստի պահանջները:

Տառաձևերի պարզացման անհրաժեշտութիւնը, բընական է և այժմէական, քանի որ արդի ճարտարապետութիւնն էլ ձգտում է դէպի պարզացում, և այդ պարզութեան մեջ և որոնում գեղեցկութիւնը՝ «Գեղեցկութիւն պարզութեան մեջ» նշանաբանով:

Աւելանալով յօրինել պարզութեան մեջ գեղեցիկ, մետապեան գրերի ոնով բարեփոխած գրեր, ուշադրութեան առինք՝ թէ ամէն մի ազգի գիր տրայայտում է իր ազգային ոնը՝ ինչպէս նաև ազգի նախաւորա-

պետութիւնը, և պէտք է պահել հայ գրեթէ ազգային ոնը:

Այժմ, մեր առջեւ դրած են հետեւեալ խնդիրները

1) Ունենալ, բարեփոխուած եւ արդիական նաեակին համապատասխանող գրեթէ:

2) Սեղմ եւ կլորած եւ տառակառոյցներով եւ դիւր-
բերեռնելի:

3) Միալայն՝ որով եւ խնայողական:

4) Պարզութեան մեջ գեղեցիկ:

5) Դիւրուսուցանելի:

Մեր նոր բոլորագրի ձեւերի յօրհման համար մեզ
մնում է միայն մի հանապառն՝ գծագրել բոլոր երկար
գրերն երեք հորիզոնական գծերի մեջ, բնութիւնով դեպի
ստաջին կամ չարտող հորիզոնականի գերադասութիւնը,
նայնպէս՝ կարելի երկու միջին հորիզոնականների մեջ՝
հնարաւոր եղած այն գրերն, որոնք գծագրւում են երեք
հորիզոնականների միջեւ:

Այդպիսով՝ յաջողեցինք կարճել բոլոր երկար
գրերն և մի շարք միջակ գրեր՝ սեղմ չափի մէջ.

«Բ» բոլորագրի ցած իջնող պաշտ կտրելով՝ ստացանք
«Ը» գիրը, որ «Բ» գրի կազմի մեջ արդէն կայ եւ հը-
նարաւոր է սեղմել ամենափոքր չափի տառածոյի ձեւա-
ցրնող գրի համար. «Բ» գրի գլխի մասից կազմեցինք
դ, դ, մ, ն, Ե, չ, պ, ր, եւ, ինչնը գրեր, մ և ն գրերի իրար
միացման անպատեհութիւնը լուծեցինք՝ մ գրի վերի
մասը դէպի ձախ և ն գրինը՝ դէպի աջ թեքելով:
Բոլոր գրերի ձեւերի յօրհման համար, անկիւնաւորի տեղ
նկատի ունեցանք կլորածելը:

Երկար գրերը կարճեցին երեք հորիզոնականների
մէջ, ուշադրութեան արժանելով այն պարագան, որ նը-
րանց վերջաւորութիւնները միայն հատեն երկու մի-

Գրամիք — Մարտիրոս

Ղին հորիզոնականների կէս չափը (մի կէտում), և ոչ թէ տառերի բունը ձևացնող մասերը:

Գլխագրերի յօրինման ընթացքում, մեր գլխագրերի մէջ եղած 4 զոյգ հակադարձ գրերի վրայ՝ աւելացան 9 զոյգ կատարեալ հակադարձ գրեր ևս *)

Լատին մանրագրերի ուսումնասիրութիւնը մեզ համար պարզում է, որ այդ գրերի մէջ ևս կան հակադարձ ձևեր ունեցող գրեր, որոնք են՝ b, d, f, t, n, u, p, q, h, y, որից պէտք է եզրակացնել, թէ որեւէ կերպով հնարաւոր չէ խուսափել հակադարձ գրերից, քանի որ, ցառածեւորի պարզացումը բնականաբար պիտի երևան բերի նրանց նոյնանման և հակադարձ վիճակը՝ որ մինչ այդ քողարկւած էր:

Չեռագրի տառաձևերի մեր առաջադրանքով ևս, աշխատեցինք կանխել ամէն մի հաւանական բխրիմացութիւն (ւ, շ, շ, դ, չ, դ, ծ, ժ), տալով այդ գրերին բնորոշ և չեփորուող տառաձևեր: **)

Բոլոր տառատեսակների ձևերի մէջ, պահեցի կազմական քառաբանութիւնը՝ նոյն ժամանակ ուշադրութեան առնելով այն պարագայը, զոր բարեձևած տառերով հնարաւոր լինի հակադարձութեան ընթերցումը:



*) Մինչև այժմ հայերէն գրութեան առաջադրանքները, միայն տպագիր մանրագրի համար են, սակայն, ոչ մի փորձ՝ գլխագրի կամ ձեռագիր գրութեան համար:

**) Տես, իմ «Արդի գրեր», բրօշուրը. (վրիպակ՝ էջ 11, երկաթագիր՝ կարդալ գլխագիր):

323

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0541507

ԱՇԽԱ

Տպագրութեան համար պատ

ՎԱՐԱՍՏԵԼ-ի

$$\begin{array}{r} 624 \\ \hline 373 \end{array}$$

- 1] «Բանաստեղծութիւնն»
- 2] «Տառերի ծագումն եւ Մետապեան գրեք»:
- 3] «Արդի գրեք (ընդարձակ)»:
- 4] Ուրազգծեր «Տառերի նախաւարեան»:
- 5] «Մետապ Մատոց» (Գաղմական վէպ)»:

Արտագրութեան
Գրախոս
Ստանդարտ

Հոյս են տեսել և վաճառուած են՝

«Արդի գրեք» եւ «Մետապեան գրեք».
խրախնայիւրի արժեք՝ 10 ռիալ (30 սեկր)

Հեղինակի հասցէն՝

Atelier de peinture „VARTAN“

135, Ave. Sewom Esland, Tehran.